

ԳԱՌՆԻԿ ԼՅՈՎԱՅԻ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՐՈՎՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱԳՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ)

Ը.00.03 - “Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում” մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ազրարային համալսարանում

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Վարդանյան Գոհար Վազգենի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սարգսյան Վարդան Ալեքերտի,
տնտեսագիտության թեկնածու
Ավագյան Արսեն Խաչատուրի

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հունիսի 12-ին, ժամը 14:00-ին
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի
տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. մայիսի 12-ին:

014 մասնագիտական խորհրդի գիտական

քարտուղար, տնտեսագիտության

դոկտոր, պրոֆեսոր



Ա.Լ. Ասլանյան

ԱՆԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հայտնի է, որ մարդկանց սննդի համար անհրաժեշտ նվազագույն նորմայի ապահովումը յուրաքանչյուր պետության առաջնահերթ խնդիրներից է: Պարենային անվտանգությունը ազգային անվտանգության բաղկացուցիչներից է, ինչը պայմաններ է ստեղծում հասարակության կայուն կենսագործունեության համար: Առանց սեփական պարենամթերքի, ազգային անվտանգության մնացած բոլոր բաղկացուցիչները էապես կորցնում են իրենց նշանակությունը, ընդ որում, պարենային անվտանգության հիմքը կազմում է գյուղատնտեսական արտադրության կայուն և հաստատուն զարգացումը:

Պարենային անվտանգությունը ագրարային քաղաքականության իրացման հիմքերից մեկն է և նախատեսում է պարենային ինքնապահովման բավականաչափ մակարդակի աջակցություն և անկախություն, ստեղծելով տնտեսական պայմաններ՝ մատչելի դարձնելով սննդի կենսականորեն անհրաժեշտ մթերքները սահմանված ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան:

Այս համատեքստում խիստ կարևորվում է վիճակագրության դերը, քանի որ մինչ այժմ չի մշակված պարենային ապահովության տնտեսավիճակագրական գնահատման մեթոդաբանություն, չի համակարգված այն բնութագրող ցուցանիշները և չի տրված դրանց հաշվարկման կարգը, չի հիմնավորված պարենային հաշվեկշիռների կազմման անհրաժեշտությունը երկրի պարենային ապահովության ծեռք բերման գործում, չի կատարված հանրապետության ժողովրդագրական ներկա իրավիճակի և պարենամթերքի նկատմամբ պահանջարկի գնահատում, նաև չի կատարված երկրի մասշտաբով բնակչության կենսապես կարևորագույն սննդամթերքի ապահովվածության մակարդակի վիճակագրական վերլուծություն, ինքնատիմջյան բաց թողնելով ինքնապահովման հարցը՝ որպես տարածաշրջանի պարենային ապահովության չափանիշ:

Այդ ամենը պահանջում է պարենային ապահովության ցուցանիշների համակարգի մշակման, գնահատման և վերլուծության նոր մեթոդաբանական լուծումներ, ինչն էլ կանխորոշել է հետազոտության թեմայի ընտրությունն ու արդիականությունը: Սույն ատենախոսությունը ՀՀ պարենային ապահովության տնտեսավիճակագրական գնահատման մեթոդաբանության և համակողմանի վերլուծության առաջին փորձերից է և դրա լուծման ուղիները թե՛ իրենց հրատապությամբ, և թե՛ իրենց գիտական ու գործնական նշանակությամբ կարևոր են հանրապետությունում պարենային ապահովության, աղքատության վերացման ու սոցիալական անհավասարության կրճատման գործընթացում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է պարենային անվտանգության և պարենային ապահովության հիմնադրույթների իրացման հիման վրա մշակել բնակչության պարենային ապահովության տնտեսավիճակագրական գնահատման մեթոդաբանություն, ներառելով նրանում ընդգրկված ցուցանիշների համակարգը, տալ դրանց հաշվարկման կարգը և վերլուծել դրանք ՀՀ տվյալներով: Այդ նպատակի իրականացման համար ատենախոսությունում առաջադրվել և վճռվել են հետևյալ խնդիրները.

- Տալ տնտեսական աճի քանակական և որակական գնահատականը ՀՀ ագրարային ոլորտում և բացահայտել բնակչության պարենային ապահովության հիմնախնդրի վճռման գյուղատնտեսական ասպեկտները,
- ՀՀ պարենային անվտանգության և պարենային ապահովության հիմնադրույթների հիման վրա ուսումնասիրել ՀՀ ժողովրդագրական ներկա

իրավիճակը և կատարել պարենամթերքի նկատմամբ պահանջարկի գնահատում.

- Հիմնավորել պարենային հաշվեկշիռների կազմման անհրաժեշտությունը երկրի պարենային ապահովության ձեռքբերման գործում (ազգային պարենային հաշվեկշիռների տվյալների վերլուծության հիման վրա), մասնավորապես՝ ի հայտ բերելով ինքնաբավության ցածր աստիճան ունեցող սննդամթերքները (ցորեն, բուսայուղ, թռչնամիս) և կատարել դրանց ինքնաբավության աստիճանի վրա ազդող գործոնների վիճակագրական գնահատում էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ,
- Մշակել պարենային ապահովության տնտեսավիճակագրական գնահատման մեթոդաբանություն, նշելով դրանում ներառված ցուցանիշների համակարգը, տալ դրանց հաշվարկման կարգը և վերլուծել դրանք.
- Ընդունելով ինքնապահովումը որպես տարածաշրջանի պարենային ապահովության չափանիշ, տալ դրա մակարդակի գնահատման տարբեր մոտեցումները, ուսումնասիրել պարենի ինքնաբավության աստիճանի ցուցանիշների դիմամիկան ըստ ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռի 2001-2012 թթ. տվյալների, մասնավորապես՝ կատարել ցորենի և թռչնամիս ինքնաբավության աստիճանի վրա ազդող գործոնների ազդեցության չափի վիճակագրական գնահատում՝ էկոնոմետրիկ մոդելների միջոցով:
- Կատարել բնակչության կենսապես կարևորագույն սննդամթերքներով ապահովվածության մակարդակի վիճակագրական վերլուծություն, մշակելով սնման երաշխավորվող ֆիզիոլոգիական նոր նորմաներ Հայաստանի ազգաբնակչության համար՝ հենվելով “սնման բուրգի” և “սնման ափսեի” վրա, համեմատելով վերջինս նվազագույն պարենային հավաքածուի և բնակչության մեկ շնչի հաշվով միջին տարեկան փաստացի սպառման հետ:
- Ուսումնասիրել ՀՀ-ում պարենային զամբյուղի ամսական արժեքի ներտարեկան դիմամիկան Ֆուրյեի շարքով և կատարել կանխատեսումներ

Հետազոտության առարկան և օբյեկտը: Հետազոտության առարկան հանրապետության բնակչության պարենային ապահովության հիմնախնդիրների լուծումը՝ պայմանավորող տնտեսավիճակագրական գնահատման մեթոդաբանության (ցուցանիշների և դրանց հաշվարկման կարգի) մշակումն է, ինչպես նաև դրանց վերլուծությունը՝ հիմնական պարենամթերքների նկատմամբ բնակչության ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովման խնդիրների լուծման համատեքստում:

Հետազոտության հիմնական օբյեկտն է հանդիսանում ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռների տվյալները, ինչպես նաև բնակչության պարենային ապահովությունը պայմանավորող այլ գործոնները՝ տարբեր պարենամթերքների գծով ինքնաբավության աստիճանը, ՀՀ բնակչության կողմից կենսապես կարևորագույն սննդամթերքների սպառման սահմանային ինդիկատորները (սնման ֆիզիոլոգիական նորմաներ, նվազագույն պարենային հավաքածու, միջին տարեկան փաստացի շնչային սպառում):

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել պարենային ապահովության հիմնախնդիրն առնչվող հայտնական և արտասահմանյան կազմակերպությունների ու տնտեսագետների ուսումնասիրությունները, ատենախոսության շրջանակներում քննարկվող խնդրին վերաբերող ՀՀ օրենսդրական, ենթօրենսդրական ակտերը, գյուղատնտեսության զարգացման ծրագրերն ու հայեցակարգերը, ՀՀ ԱԾ հրատարակումները, ոլորտի հիմնահարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների վերլուծական և տեսամեթոդաբանական նյութերը: Ատենախոսության համար տեղեկատվական

արբյուր են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՄԱԿ-ի պարենանթրոպիան և գյուղատնտեսական կազմակերպության (FAO) ու այլ ազգային և միջազգային կազմակերպությունների նյութերը և զեկույցները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային ու համալիր մոտեցման սկզբունքներ, տրամաբանական, համեմատական, վիճակագրական և էկոնոմետրիկական վերլուծության մեթոդներ:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթ:

Հետազոտության գիտական նորույթն է պարենային ապահովության տնտեսավիճակագրական գնահատման նոր մեթոդաբանության մշակման հիման վրա այն բնութագրող ցուցանիշների համակարգի ստեղծումը, դրանց հաշվարկման, գնահատման և վերլուծության համակարգի ընդհանրացումն ու զարգացումը, ժամանակի ու տարածության մեջ դրանց վերլուծական գործիքակազմի ընդլայնումը: Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն տեսական, մեթոդաբանական և կիրառական ուղղվածություն, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- Բացահայտվել են պարենային հաշվեկշիռների կազմման մեթոդաբանական առանձնահատկությունները և հիմնավորվել է հաշվեկշիռներում ներկայացված տեղեկատվության դերը երկրի պարենային ապահովության ծեռքերման գործում, մասնավորապես՝ ի հայտ են բերվել ինքնաբավության ցածր աստիճան ունեցող սննդամթերքները և կատարվել են դրանց ինքնաբավության աստիճանի վրա ազդող գործոնների վիճակագրական գնահատում՝ էկոնոմետրիկ մոդելների միջոցով.
- Ուսումնասիրելով և ընդհանրացնելով միջազգային փորձը, առաջին անգամ վիճակագրության պրակտիկայում մշակվել է պարենային ապահովության տնտեսավիճակագրական գնահատման մեթոդաբանություն, ձևավորելով պարենային ապահովության ցուցանիշների համակարգ, տրվել է դրանց հաշվարկման կարգը և վերլուծության մեթոդները:
- Դիտարկելով ինքնապահովումը որպես տրամաշրջանի պարենային ապահովության չափանիշ՝ տրվել են դրա մակարդակի գնահատման տարբեր մոտեցումները, ուսումնասիրվել է պարենի ինքնաբավության աստիճանի ցուցանիշների դինամիկան ըստ ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռի տվյալների, մասնավորապես՝ կատարվել է ցորենի և քոչնամսի ինքնաբավության աստիճանի վրա ազդող գործոնների ազդեցության չափի վիճակագրական գնահատում:
- Վերլուծվել է բնակչության կենսապես կարևորագույն սննդամթերքներով ապահովվածության մակարդակը, մշակվել են սնման երաշխավորվող ֆիզիոլոգիական նոր նորմաներ Հայաստանի ազգաբնակչության համար՝ հենվելով «սնման բուրգի» և «սնման ափսեի» վրա, համեմատելով վերջինս նվազագույն պարենային հավաքածուի և բնակչության մեկ շնչի հաշվով միջին տարեկան փաստացի սպառման հետ:
- Վերլուծվել են ՀՀ-ում պարենային զանբյուրի ամսական արժեքի պարբերական տատանումները Ֆուրյեի շարքով և դրա հիման վրա կատարվել են կանխատեսումներ:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը: Աշխատանքի գործնական նշանակությունը պայմանավորված է կատարված հետազոտությունների և վերլուծությունների կիրառական ուղղվածությամբ: Հետազոտության արդյունքները, ճշգրտագույնությամբ ու առաջարկություններով, ինչպես նաև աշխատանքում ներկայացված մեթոդաբանական մոտեցումները ունեն կիրառական բնույթ և կարող են օգտագործվել պետական կառավարման

մարմինների կողմից ազրարային քաղաքականության հանձնարարականների մշակման, ՀՀ ԱԿԾ-ի կողմից՝ միջազգային վիճակագրության ժամանակակից պահանջներին համապատասխան երկրի բնակչության պարենային ապահովության իրական պատկերը համարժեք զնահատող ցուցանիշների մշակման և հաշվարկման գործընթացում, ինչպես նաև “Սոցիալ-տնտեսական վիճակագրություն” դասընթացում “Պարենային ապահովության վիճակագրություն” թեմայի ներառման և դրա ուսումնասիրության համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության հիմնական արդյունքները քննարկվել են ՀԱԱՀ-ում, ՀՊՏՀ-ում, Մոսկվայի Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական Ակադեմիայում 2006-2013 թթ. կայացած ամենամյա գիտաժողովներում, մասնավորապես՝ “Միջազգային առևտրի հիմնախնդիրները և Հայաստանը”, “Հայաստանի տնտեսությունը”, “Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները”, “ՌԴ և ՀՀ տնտեսությունները համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում. հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները” գիտաժողովներում: Ատենախոսությունում ցորենի և թռչնամսի ինքնաբավության աստիճանի վրա ազդող գործոնների ազդեցության չափի վիճակագրական զնահատականը տալու համար կիրառված եռաչափ զծային ռեգրեսիոն մոդելները, ինչպես նաև ժամանակային շարքերում մնացորդային ավտոկոռելացիայի վերլուծությունը՝ ճշտված հաջորդական տարբերությունների մեթոդով ավտոկոռելացիայի գործակիցը հավանության է արժանացել և ներդրվել է ՀՀ ԱԿԾ-ի պարենային ապահովության վիճակագրության բաժնի կողմից ազգային պարենային հաշվեկշիռներում ինքնաբավության ցածր աստիճան ունեցող ապրանքախմբերի ինքնաբավության վրա ազդող գործոնների բացահայտման համար, իսկ առաջարկված սնման երաշխավորվող ֆիզիոլոգիական նորմաները ներդրվել են ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս.Խ. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի կողմից բնակչության առողջ պարելակերպի սննդակարգերի գծով մեթոդական հանձնարարականների մշակման և հաստատման ժամանակ:

Միևնույն ժամանակ առաջարկվել է “Սոցիալ-տնտեսական վիճակագրություն” դասընթացում նախատեսել առանձին բաժին “Պարենային ապահովության վիճակագրություն” վերնագրով:

Ատենախոսության բովանդակության հիմնական տարրերը և արդյունքները ներկայացված են հեղինակի կողմից ՀՀ-ում և արտասահմանում հրատարակված 19 գիտական հոդվածներում:

Ատենախոսությունն օգտակար կլինի տնտեսագետներին, որոնք զբաղվում են պարենային ապահովության և անվտանգության հիմնախնդիրներով, տնտեսագիտական ԲՈՒՀ-երի և ֆակուլտետների ուսանողներին, ինչպես նաև մասնավոր հատվածի ներկայացուցիչների համար:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Աշխատանքի կառուցվածքը բխում է հետազոտության նպատակից ու խնդիրներից: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությանը հարստացնում է 10 գծապատկեր, 5 գծանկար, 31 աղյուսակ: Ատենախոսության ծավալը կազմում է 178 էջ առանց հավելվածի:

ԱՍԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օրյեկտն ու առարկան, աշխատանքի տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, ստացված արդյունքների կիրառական նշանակությունը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ “Բնակչության պարենային ապահովությունը որպես վիճակագրական ուսումնասիրության օբյեկտ” գլխում ուսումնասիրվել են ՀՀ պարենային անվտանգության և պարենային ապահովության հիմնադրույթները, բնակչության պարենային ապահովության հիմնախնդրի վճռման գյուղատնտեսական ասպեկտները: ՀՀ ագրարային ոլորտում տնտեսական աճի քանակական և որակական գնահատման հիման վրա կատարվել է ՀՀ ժողովրդագրական ներկա իրավիճակի և պարենամթերքի նկատմամբ պահանջարկի գնահատում էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ:

Համաձայն 1996 թ. Պարենի համաշխարհային գազաթնամոզողվի ընդունած Պարենի Համաշխարհային ապահովության և գործողությունների պլանի հռչակագրի՝ պարենային ապահովությունը առկա է, երբ մարդիկ ունեն ֆիզիկական, սոցիալական և տնտեսական մատչելիություն՝ իրենց կարիքներին և նախասիրություններին համապատասխան ակտիվ և առողջ կյանք վարելու համար բավարար քանակությամբ անվտանգ և սննդարար պարենամթերք: Եվ հակառակը, պարենային անապահովությունն առկա է, երբ մարդկանց համար ազատ մատչելի չեն աճի, զարգացման, ինչպես նաև ակտիվ ու առողջ կյանք վարելու համար բավարար քանակությամբ անվտանգ ու սննդարար պարենամթերք:

Պարենային անապահովությունը կարող է պայմանավորված լինել պարենամթերքի բացակայությամբ, բնակչության անբավարար գնողունակությամբ և այլնով, որոնք հանդիսանում են նաև տնային տնտեսություններում պարենամթերքի անբավարար օգտագործման (թերսնունմ) հիմնական պատճառները: Պարենային անապահովությունը կարող է լինել քրոնիկ, սեզոնային կամ ժամանակավոր:

Պարենային ապահովության և անապահովության սահմանումները կարևոր են, քանի որ պարենով ապահովվածության վերլուծության կատարման հիմնական նպատակը հանդիսանում է ոչ այնքան համարժեք սնվող մարդկանց թվի որոշումը, այլ ավելի շատ բացահայտումը՝ թե ովքեր, որ տնային տնտեսությունները և բնակչության որ խմբերը չեն ստանում բավարար քանակությամբ սնունդ և ինչ պատճառներով:

Պարենամթերքի պահանջարկը կախված է երկու գործոններից.

- բնակչության թվաքանակից և
- բնակչության կողմից սննդամթերքի քանակին և որակին ներկայացվող պահանջներից:

Եվ այն դեպքում, երբ խոսքը գնում է պարենային հիմնախնդրի մասին առանձին վերցրած մեկ երկրում կամ տարածաշրջանում, բնակչության թվաքանակի գործոնը դրվում է առաջին տեղում՝ համարելով այն վճռորոշ:

Ատենախոսությունում կատարվել է ՀՀ բնակչության թվաքանակի դինամիկայի հաշվարկ 1926-2012թթ. ընկած ժամանակահատվածում, ընդ որում որպես հաշվարկման բազիս ընդունվել են 1926 (86 տարի), 1939 (73 տարի), 1959 (53 տարի), 1970 (42 տարի), 1979 (33 տարի), 1989 (23 տարի) և 2000 (12 տարի) տարեթվերը: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ վերջին 86 տարիների ընթացքում ՀՀ բնակչության թվաքանակն աճել է շուրջ 3,7 անգամ, 73 տարիների ընթացքում՝ ավելի քան 2,5 անգամ, 53 տարիների ընթացքում՝ 1,86 անգամ, 42

տարիների ընթացքում 1,31, 33 տարիների ընթացքում՝ 1,084 անգամ, վերջին 23 տարիների ընթացքում պաշտոնական վիճակագրության տեղեկատվության համաձայն տեղի է ունեցել մեր հանրապետության բնակչության թվաքանակի նվազում 5,0 %-ով (95,0-100) և վերջին տասներկու տարում աճ՝ 1,5 %-ով: 1989թ-ից հետո բնակչության ընդհանուր թվաքանակի աճման վրա իր բացասական ազդեցությունն է ունեցել նաև արտագաղթը:

Ատենախոսությունում կատարված վերլուծությունները ցույց են տվել, որ ՀՀ-ում վեջին 18 տարիների ընթացքում գյուղատնտեսության արտադրանքը աճել է 152,7%-ով (այդ թվում բուսաբուծությունում՝ 116,3%-ով և անասնաբուծությունում՝ 210,0%-ով), ՀՆԱ-ն աճել է 7,65 անգամ, մեկ շնչի հաշվով՝ 9,52 անգամ, գյուղատնտեսության արտադրանքը մեկ շնչի հաշվով 3,13 անգամ: Սակայն գյուղատնտեսության արտադրանքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում նվաճած ժամանակաշրջանում նվազել է 42,71 տոկոսային կետով: Միաժամանակ կարող ենք փաստել, որ բացառությամբ 2000-2003 թթ., մնացած տարիներին նկատվել է գյուղատնտեսական արտադրանքի՝ ամբողջությամբ վերցրած և նույնը՝ բնակչության մեկ շնչի հաշվով շրթայական աճի մոտավորապես մինևույն տեմպեր: 2010թ. 2009թ. նկատմամբ արտադրանքը աճել է 15,3%-ով, իսկ նույնը բնակչության մեկ շնչի հաշվով՝ 14,9%, 2011թ. 2010թ. նկատմամբ այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 24,9 և 24,4%, ինչի մասին են վկայում թիվ 1 աղյուսակում բերված տվյալները:

Աղյուսակ 1. ՀՀ գյուղատնտեսության արտադրանքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1995-2012թթ.

Տարեթիվ	Գյուղատնտես. արտադրանք մլրդ. դրամ	այդ թվում		ՀՆԱ մլրդ. դրամ (շուկայական գներով)	ՀՆԱ մեկ շնչի հաշվով, հազ. դրամ	Գյուղատնտ. արտադրանքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	Գյուղատնտես. արտադրանք 1 շնչի հաշվով, հազ. դրամ	Շրթայական աճի (նվազման) տեմպերը (%)	
		բուսաբուծության	անասնաբուծության					Գյուղ. արտադրանքի	բնակչության 1 շնչի հաշվով գյուղ. արտադրանքի
1995	333.0	228.0	105.0	522.3	138.9	63.76	88.7	100	100
1996	342.7	194.7	148.0	661.2	175.2	51.83	91.0	102.9	102.6
1997	355.8	194.0	161.8	804.3	212.5	44.24	94.1	103.8	103.4
1998	402.1	245.6	156.5	955.4	251.8	42.10	106.1	113.0	112.8
1999	311.7	180.0	131.7	987.4	259.8	31.57	82.1	77.5	77.4
2000	281.2	136.2	145.0	1031.0	320.2	27.27	87.5	90.2	106.6
2001	351.0	208.0	143.0	1175.9	365.8	29.85	82.1	124.8	93.8
2002	377.6	226.6	151.0	1362.5	424.2	27.71	82.1	107.6	100.0
2003	410.1	228.7	181.4	1624.6	505.9	25.24	127.8	108.6	155.7
2004	504.1	283.9	220.2	1907.9	593.6	26.42	156.8	122.9	122.7
2005	493.0	288.0	205.0	2242.9	697.1	22.0	153.2	97.8	97.7
2006	555.9	356.2	199.7	2657.1	824.9	20.92	172.5	112.8	112.6
2007	633.9	429.9	204.0	3149.3	976.1	20.13	196.2	114.0	113.7
2008	628.1	405.9	222.2	3568.2	1103.3	17.60	194.5	99.1	99.1
2009	552.1	346.7	205.4	3141.7	968.5	17.57	170.5	87.9	87.7
2010	636.7	392.7	244.0	3460.2	1062.7	18.4	195.9	115.3	114.9
2011	795.0	465.1	329.9	3776.4	1155.4	21.05	243.7	124.9	124.4
2012	841.5	516.0	325.5	3997.6	1321.9	21.05	278.0	105.9	114.1

* Աղյուսակը կազմված և հաշվարկված է հեղինակի կողմից՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք՝ 2001թ. (1996-1998), էջ 15, 2002թ., էջ 15, 2006թ., էջ 16, 2010թ., էջ 16, 2012թ., էջ 16, 2013թ., էջ 17 տվյալների հիման վրա (www.armstat.am)

Ատենախոսության 2-րդ՝ “Բնակչության պարենային ապահովության տնտեսավիճակագրական ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական հիմքերը” գլխում

հիմնավորվել է պարենային հաշվեկշիռների կազմման անհրաժեշտությունը երկրի պարենային ապահովության ձեռքբերման գործում, առաջարկվել է պարենային ապահովության տնտեսավիճակագրական գնահատման մեթոդաբանություն. այն է՝ ցուցանիշները և դրանց հաշվարկման կարգը, ինքնապահովումը դիտարկելով որպես տարածաշրջանի պարենային ապահովության չափանիշ, ներկայացվել են դրա մակարդակի գնահատման տարբեր մոտեցումները, ուսումնասիրվել է պարենի ինքնաբավության աստիճանի դինամիկան ըստ ԴՅ ազգային պարենային հաշվեկշռի վերջին տասներկու տարիների տվյալների. նրանում ներառված 14 պարենաբաղադրամասերի, մասնավորապես՝ ի հայտ բերելով ինքնաբավության ցածր աստիճան ունեցող սննդամթերքները (ցորեն, բուսայուղ, թռչնամիս) և կատարվել է դրանց ինքնաբավության աստիճանի վրա ազդող գործոնների վիճակագրական գնահատում է կոնոմետրիկ մոդելների կիրառմամբ:

Յուրաքանչյուր պետությունում պարենային ապահովության իրավիճակի մասին ամբողջական և համապարփակ տեղեկատվություն կարելի է ստանալ պարենային հաշվեկշիռներից, որոնց կազմելու անհրաժեշտությունն ակներև դարձավ երկրորդ աշխարհամարտից հետո և դա պայմանավորված էր պարենի արտադրության և մատակարարման ընդհատումներով: Պարենային հաշվեկշիռներն անհրաժեշտ են որոշակի ժամանակահատվածում երկրի պարենային ապահովության ամբողջական նկարագրության և պարենի անբավարար մատակարարման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

Պարենային հաշվեկշիռներում ներկայացվող ինքնաբավության աստիճանի ցուցանիշը (ինչը հաշվարկվում է որպես պարենամթերքի արտադրության և առաջարկի ցուցանիշների հարաբերություն, արտահայտված տոկոսներով), կարելի է ասել առանցքային դեր ունի պարենամթերքով բնակչության պահանջարկի բավարարման հարցում, իսկ վերջինս բխում է ցանկացած պետության տնտեսական շահերից և ընկած է պարենային քաղաքականության հիմքում:

Թիվ 2 աղյուսակում ներկայացված են տվյալներ ԴՅ ազգային պարենային հաշվեկշռի առանձին ցուցանիշների դինամիկայի վերաբերյալ 2001-2012 թթ. ընկած ժամանակահատվածում:

Ատենախոսությունում մշակվել է պարենային ապահովության տնտեսավիճակագրական գնահատման մեթոդաբանություն, խմբավորվել են այն բնութագրող որակական և քանակական ցուցանիշները և տրվել է դրանց հաշվարկման կարգը: Որպես քանակական ցուցանիշներ դիտարկվել են բնակչության մեկ շնչին ընկնող հիմնական սննդամթերքների սպառման մակարդակը, կիրճումներով, բնակչության վճարունակ պահանջարկի մակարդակը (այն արտացոլում է ապրանքների և ծառայությունների ձեռք բերման գծով բնակչության ներուժային հնարավորությունները) և պարենի ինքնաբավության աստիճանի ցուցանիշը (այն բնութագրում է երկրում արտադրված և սպառված գյուղատնտեսական արտադրանքի արժեքների միջև եղած տոկոսային հարաբերությունը, իր մեջ ներառում է նաև պարենի մատչելիության և բավականաչափության ցուցանիշները):

“Պարենային ապահովություն և աղքատություն” (2012 թվականի հունվար-դեկտեմբեր), վիճակագրական տեղեկագիր, ԴՅ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2012, էջ 72

Աղյուսակ 2. 33 ազգային պարենային հաշվեկշիռի ցուցամիջոցների դինամիկան 2001-2012 թթ.*													
Պարենամթերքի տեսակները	Արտադրություն (հզ.տ)		Ներմուծում (հզ.տ)		Ամբողջ օգտագործում (հզ.տ)		Արտահանում (հզ.տ)		Ինքնաբավության աստ. %		Բաց շեղում (+) (-)		
	2001	2012	2001	2012	2001	2012	2001	2012	2001	2012			
Ցորեն	242.0	243.1	100.5	328.0	502.5	152.7	456.0	428.8	94.0	7.6	42.4	32.9	-8.5
Կարտոֆիլ	363.8	647.2	177.9	2.0	7.8	390	144.9	124.8	86.1	0.0	99.5	99.0	-0.5
Բանջարեղեն	456.0	1054.0	231.1	1.1	21.0	1909.1	415.4	983.5	236.8	0.2	6600.0	99.3	-0.5
Միզոլիստ (բացի խառնուրդից)	102.4	331.7	324.0	8.3	39.2	472.3	98.4	305.5	310.5	5.8	441.4	97.6	-1.5
Հատիկադեղին և մշակաբույսեր	3.3	5.1	154.5	4.1	4.0	97.6	6.8	8.8	129.4	0.0	0	44.6	+11.4
Բուսական յուղ	0.3	2.7	900.0	13.1	26.9	205.3	13.1	28.8	119.8	0.0	0	2.2	+6.9
Շաքար	0.0	69.3	6	74.7	6.8	9.1	72.2	81.9	113.4	0.9	188.9	0.0	+83.1
Չուր	24.6	36.2	147.2	0.7	0.2	28.6	22.4	33.8	154.9	0.7	0	100.0	-0.5
Կաթ կարագից	465.3	618.2	132.9	7.6	134.8	1773.7	391.6	673.3	171.9	0.3	3000.0	98.5	-15.4
Տավարի միս	29.4	47.6	161.9	8.2	11.3	137.8	37.0	57.5	155.4	0.0	6	78.2	+3.4
Խոզի միս	8.5	9.4	110.6	3.7	15.5	418.9	12.1	24.6	203.3	0.0	6	69.4	-31.1
Ոչխարի և այծի միս	6.8	8.5	125.0	0.0	0.0	0	6.7	8.4	125.4	0.0	0	100.0	0
Հավի միս	3.6	8.3	230.6	13.8	35.3	255.8	17.3	43.3	250.3	0.0	6	20.7	-1.6
Խաղող	116.5	241.4	207.2	3.9	4.0	102.6	118.9	16.9	14.2	0.9	1133.3	97.5	+5.1

*Աղյուսակը կազմված է հաշվարկված և հերիցների կողմից «Պարենային ապահովություն և աղքատություն» վիճակագրական տեղեկագրի 2004 թ., հունվալ- դեկտեմբեր (էջ 34) և 2012 թ., հունվար-հունիս (էջ 64), 2013 թ., հունվար-դեկտեմբեր, (էջ 71-72) տվյալների հիման վրա:

Որպես որակական ցուցանիշ դիտարկվել է ֆիզիոլոգիական պահանջմունքի մակարդակի ցուցանիշը, կիրկալորիաներով:

Սպառման բավականաչափությունը և պարենի մատչելիությունը պարենային ապահովության և անվտանգության որոշիչ պահանջն է և նորմատիվային բազայի մշակման ժամանակ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի այդ ցուցանիշների վրա: Այդ ցուցանիշների հաշվարկման համար առաջարկվում է կիրառել հետևյալ բանաձևերը.

Պարենամթերքի սպառման բավականաչափության ընդհանուր գործակիցը.

$$K_{\text{բոս.1 (բավականաչափ)}} = \frac{P_{\Phi}}{P_{\rho}} = \frac{\text{օրական (ամսական) փաստացի սնման ռացիոնի (օրապարեն) արժեք}}{\text{ըստ բժշկական նորմերի օրական (ամսական) սնման ռացիոնի արժեք}} \quad (1)$$

կամ

$$K_{\text{բոս.2 (բավականաչափ)}} = \frac{P_{\Phi}}{P_{\rho}} = \frac{\text{օրական (ամսական) փաստացի սնման ռացիոն, կկալ}}{\text{ըստ բժշկական նորմերի օրական (ամսական) սնման ռացիոն, կկալ}} \quad (2)$$

Ընդհանուր գործակիցներին զուգահեռ հաշվարկվում են նաև պարենամթերքի սպառման բավականաչափության մասնակի գործակիցներ՝ ըստ սննդամթերքների առանձին տեսակների, տվյալ տարածաշրջանի բաղաբային և գյուղական բնակչության համար առանձին-առանձին:

Հաշվարկման այսպիսի մեթոդաբանությունն անհրաժեշտ է որոշակի կոնկրետ ժամանակահատվածում փաստացի տվյալները բժշկական նորմերի հետ համեմատելու համար: Որքան այդ նշանակությունները մոտ են ստացվում 1-ին (100%-ին), այնքան փաստացի սնման նորմերը համապատասխանում են երաշխավորվող բժշկական նորմերին և կնշանակի, որ տվյալ տարածաշրջանում սոցիալ-տնտեսական վիճակը կայուն է:

Պարենի մատչելիությունը բնութագրվում է բնակչության կողմից փաստացի սպառված պարենամթերքի մակարդակով, այն մեծապես կախված է առկա ռեսուրսներից, այդ թվում՝ տնային տնտեսությունների դրամական եկամուտներից, որոնք հանդիսանում են բնակչության կենսամակարդակը գնահատող կարևորագույն ցուցանիշներ:

Պարենի մատչելիության ընդհանուր ցուցանիշը հաշվարկվում է.

$$K_{\text{մատչելիության}} = \frac{C_{\text{III}}}{I} = \frac{\text{պարենային զանրյուղի ամսական արժեք, դրամ}}{\text{բնակչության 1 շնչին ընկնող միջին ամսական եկամուտը կամ վերջնական սպառման վրա կատարված ծախսերը, դրամ}} \quad (3)$$

Տվյալ դեպքում բնակչության տարբեր խմբերի եկամուտների օրեցօր խորացող տարբերակման հետ կապված, պարենի մատչելիության մասնակի ցուցանիշները հաշվարկվում են ըստ եկամտի տարբեր մակարդակ ունեցող խմբերի: Որքան այս գործակիցի նշանակությունը մոտ է ստացվում մեկին, այնքան բնակչության դրամական եկամուտների մեջ բարձր է պարենային ապրանքների վրա կատարված ծախսերի տեսակարար կշիռը և այնքան ավելի քիչ են դրանք դառնում մատչելի:

Այս ցուցանիշները առանձնահատուկ նշանակություն են ստանում, երբ համեմատվում են իրենց սահմանային թվերի հետ: Սահմանային թվերի որոշման ժամանակ պարենային ասպեկտն ունի որոշակի առանձնահատկություններ: Ցուցանիշների ստորին սահմանը բնութագրում է այնպիսի մակարդակ, որից ցածր երկիրը և իր բնակիչները կհայտնվեն աղետալի իրավիճակում, այսինքն ենթարկված կլինեն թերսնման, սովի, ինչն էլ ուղղակիորեն կվտանգի երկրի

տնտեսական անվտանգությունը: Վերին սահմանը բնութագրական է սննդի հանդեպ մարդու ֆիզիոլոգիական պահանջմունքների գերազանցելուն (դրա սահմաններից դուրս գալուն), ինչը հասարակությանը սպառնում է գիրությանը, ավելցուկային քաշով, գերսնման հետ կապված հիվանդություններով:

Պարենամթերքի սպառման բավականաչափության ցուցանիշի համար վերին սահման է ծառայում սնման ռացիոնի բժշկական նորմերը, իսկ պարենի մատչելիության մակարդակի հաշվարկման համար՝ պարենային զանբյուդի արժեքը:

Ստորին սահմանային նշանակություն ընդունված է համարել FAO-ի դասակարգման համաձայն սահմանված նորման՝ օրական 2150 կկալ, ինչը վերաբերում է սովի սահմանագծին գտնվող կատեգորիային և դա համարվում է ճգնաժամային սահմանային նշանակություն: Ի դեպ, սովածների կատեգորիայի ցուցանիշ է համարվում օրական 1520 կկալ սահմանը:

Այս դեպքում պարենամթերքի սպառման բավականաչափության ցուցանիշի բանաձևը՝ հաշվի առած ճգնաժամային սահմանային նշանակությունը կունենա հետևյալ տեսքը:

Բավականաչափության ճգնաժամային ցուցանիշը.

$$K_{\text{ուսումնասիրվող}} = \frac{\text{Փաստացի օրական սնման ռացիոնի կկալ}}{2150} \quad (4)$$

(4) ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունն անհրաժեշտ է ուսումնասիրվող և կրիտիկական տվյալների միջև եղած ճեղքվածքի չափի որոշման համար:

Ատենախոսությունում կատարվել է պարենամթերքի սպառման բավականաչափության և պարենի մատչելիության ցուցանիշների հաշվարկ 2009-2012 թթ. համար երկու կտրվածքով. ա) ՀՀ ԱՎԾ կողմից ըստ ՀՀ ԱՆ կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի և բ) ՀՀ ԱՎԾ կողմից ՀԲ մեթոդաբանությամբ ՏՏԿԱՀ արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զանբյուդի, ինչը ներկայացված է ներքոհիշյալ թիվ 3 աղյուսակում:

Թիվ 4 աղյուսակում ներկայացված են տվյալներ պարենային հաշվեկշռում ընդգրկված 14 ապրանքատեսակների գծով պարենի ինքնաբավության աստիճանի վերաբերյալ ՀՀ-ում 2001-2012 թթ համար:

Թիվ 4 աղյուսակի տվյալներից ակներև է, որ վերջին տասներկու տարիների ընթացքում նկատելիորեն իջել են պարենի այնպիսի կարևորագույն տեսակների գծով ինքնաբավության աստիճանը, ինչպիսիք են. ցորենը (9,5 %-ով), կարտոֆիլը (0,4 %-ով), բանջարեղենը (0,5 %-ով), մրգերը (3,9 %-ով), ձուն (2,4 %-ով), կաթը (16,9 %-ով), խոզի միսը (53,5 %-ով) և հավի միսը (1,7 %-ով): Նույն ժամանակաընթացքում տավարի մսի (աճ 3,2 %-ով), հատիկաընդդեմային մշակաբույսերի (աճ 11,4% -ով), բուսական յուղի (աճ 6,9% -ով), շաքարի (2001 թ. 0,0-ից 2012 թ. հասել է մինչև 93,1%-ի), ոչխարի և այծի մսի (աճ 0,4 %-ով) և խաղողի (աճ 3,3%-ով) գծով նկատվել է ինքնաբավության աստիճանի բարձրացում:

<p align="center">Մյուս ազ 3. Պարենամբերի սպառման բավականացվածություն և պարենի մատչելիության ցուցանիշների հաշվարկը (ՀՀ բնակչության պարենային ավաիության մակարդակը) 2009-2012թթ.*</p>										
	Պարենային գանրուրի անավան արժեքը ըստ համապատասխան եռամսյակների միջին ընթացիկ գներով, դրամ					6	7	8	9	10
	I եռամ.	II եռամ.	III եռամ.	IV եռամ.	5					
A										
2009թ. Հաշվարկված ՀՀ ԱԿԾ կողմից ըստ ՀՀ ՍՍ	23210	24422	23069	24067	23692	2412.1	2162	28038	0,896	0,845
Հաշվարկված ՀՀ ԱԿԾ կողմից ըստ ՀՀ մեքուր.	20093	20738	17655	18841	19334	2232.0			0,969	0,690
2010թ. Հաշվարկված ՀՀ ԱԿԾ կողմից ըստ ՀՀ ՍՍ	25958	26486	28065	29508	27504	2412.1	2061	31553	0,855	0,872
Հաշվարկված ՀՀ ԱԿԾ կողմից ըստ ՀՀ մեքուր.	20457	21329	19793	21449	20757	2232.0			0,923	0,658
2011թ. Հաշվարկված ՀՀ ԱԿԾ կողմից ըստ ՀՀ ՍՍ	35390	35175	30398	30107	32768	2412.1	2093	34206	0,868	0,958
Հաշվարկված ՀՀ ԱԿԾ կողմից ըստ ՀՀ մեքուր.	24326	24899	21536	22592	23338	2232.0			0,938	0,682
2012թ. Հաշվարկված ՀՀ ԱԿԾ կողմից ըստ ՀՀ ՍՍ	31258	29985	28499	29400	29786	2412.1	2169	39056	0,899	0,763
Հաշվարկված ՀՀ ԱԿԾ կողմից ըստ ՀՀ մեքուր.	24909	24261	20950	22795	23229	2232.0			0,871	0,595


**Աղյուսակ 4. Պարենի ինքնաբավության աստիճանի ցուցանիշների
դինամիկան ըստ ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռի 2001-2012 թթ. տվյալների**

N	Աստիճանի անվանումը	Ինքնաբավության աստիճան. %											
		2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
1	Ցորեն	42.4	45.2	40.7	41.6	43.7	31.6	36.7	39.8	33.3	33.5	36.5	32.9
2	Կարտոֆիլ	99.4	99.5	99.4	99.7	99.9	99.7	99.0	99.9	100.7	100.2	98.2	99.0
3	Բանջարեղեն	99.8	102.2	102.5	102.2	101.7	100.0	100.0	99.5	98.9	98.3	98.2	99.3
4	Միզոց (բացի խաղողից)	100	94.6	94.0	86.5	95.7	96.9	89.4	93.4	95.9	79.8	90.0	96.1
5	Հատիկա-ընդերեմային մշակաբույսեր	44.6	46.7	60.2	63.4	58.7	48.8	52.0	57.9	58.6	41.7	47.3	56.0
6	Բուս. յուղ	2.2	8.8	10.3	2.9	1.5	14.1	1.3	1.7	4.2	4.1	2.8	9.1
7	Շաքար	0.0	0.0	0.0	0.9	1.8	3.6	3.5	3.4	1.3	24.6	43.9	93.1
8	Չուր	101.9	102.7	104.2	108.4	101.8	99.2	99.3	99.7	100.0	99.2	94.1	99.5
9	Կար	100	98.0	98.4	98.0	99.8	98.1	96.5	97.6	90.7	87.0	82.9	83.1
10	Տավարի միս	78.4	77.3	75.5	73.9	76.8	79.7	84.7	72.6	78.6	85.1	78.4	81.6
11	Խոզի միս	91.8	73.1	65.3	54.8	57.3	64.9	54.3	31.4	35.6	41.1	43.3	38.3
12	Ոչխարի միս	99.6	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
13	Հավի միս	20.8	25.6	27.9	24.3	18.7	32.3	16.9	14.0	14.3	12.4	12.2	19.1
14	Խաղող	99.3	97.2	95.5	98.0	98.2	98.2	100.0	100.6	100.0	101.1	101.4	102.6

*Աղյուսակը կազմված և հաշվարկված է հեղինակի կողմից «Պարենային ապահովություն և աղբատություն» վիճ.տեղեկագրի 2001 թ. հունվար-դեկտեմբեր (էջ 35-36), 2004 թ. հունվար-դեկտեմբեր, էջ 34, 2005թ. հունվար-սեպտեմբեր (35,36,37), 2007թ. հունվար-սեպտեմբեր (էջ 70-71), 2008 թ. հունվար-հունիս (էջ 61-64)2009թ հունվար-սեպտեմբեր (էջ 73), 2012թ. հունվար-հունիս (էջ 62,63,64), 2013 թ., հունվար-դեկտեմբեր, (էջ 71-72) տվյալների հիման վրա:

Ինչպես վկայում են աղյուսակ 4-ի տվյալները, 2001-2012 թթ. ցորենի ինքնաբավության աստիճանը բնութագրվել է նվազման միտումով, ինչը ներկայացված է գծապատկեր 1-ում:

Ցորենի ինքնաբավության աստիճանի վրա ազդող գործոնային վերլուծության արդյունքում (բազմաթիվ գործոններից ընտրել ենք այնպիսիները, որոնք ՀՀ բնատնտեսական և արտադրության կազմակերպման պայմաններից կախված հնարավոր է կառավարել) պարզվել է, որ ցորենի բերքատվության մակարդակի 1 ցենտներով ավելացումը ինքնաբավության աստիճանը բարձրացնում է 0,823%-ով, իսկ ցորենի կորուստների 1000 տոննայով կրճատումը ինքնաբավության աստիճանը կբարձրացնի միջին հաշվով 2,857%-ով: Վերլուծությունը կատարվել է բազմակի գծային ռեգրեսիոն մոդելի միջոցով, SPSS-16 ծրագրային փաթեթի օգնությամբ:



Գծապատկեր 1. ՀՀ-ում ցորենի ինքնաբավության աստիճանը 2001-2012թթ, %

Նույն մեթոդով կատարվել է նաև թռչնի մսի ինքնաբավության աստիճանի վրա ազդող գործոնների վերլուծություն, որի արդյունքում պարզվել է, որ թռչնի մսի կորուստների մեկ տոննայով ավելացումը, մյուս հավասար պայմաններում, թռչնի մսի ինքնաբավության աստիճանը կրճատում է 0,018086%-ով, իսկ ոչ ածան հավերի գլխաքանակի տեսակարար կշիռի մեկ տոկոսով ավելացումը այդ ցուցանիշը բարձրացնում է 0,277%-ով:

Մնացորդների ավտոկոռելյացիայի գործակցով ճշգրտումից հետո ստացված արդյունքները հետևյալն են. թռչնի մսի կորուստների մեկ տոննայով կրճատումը, մյուս հավասար պայմաններում, թռչնի մսի ինքնաբավության աստիճանը կբարձրացնի 0,029196%-ով, իսկ ոչ ածան հավերի գլխաքանակի տեսակարար կշիռի մեկ տոկոսով ավելացումը այդ ցուցանիշը բարձրացնում է 0,465%-ով:

Այդուսակ 5-ում ներկայացված է վերոնշյալ մոդելի հաշվարկման համար անհրաժեշտ պաշտոնական վիճակագրության և մեր կողմից կատարված հաշվարկային տվյալները:

Առենախտության երրորդ՝ “Բնակչության կենսապես կարևորագույն սննդամթերքներով ապահովվածության մակարդակի վիճակագրական վերլուծությունը և կանխատեսումներ” գլխում կատարվել է բնակչության կենսապես կարևորագույն սննդամթերքներով ապահովվածության մակարդակի վիճակագրական վերլուծություն, ուսումնասիրվել է ՀՀ-ում պարենային զանրուղի ամսական արժեքի ներտարեկան դինամիկան Ֆուրյեի շարքով և կատարվել կանխատեսումներ:

Հաշվի առնելով հանրապետության ներկա սոցիալ-տնտեսական վիճակը, տարածաշրջանի առանձնահատկությունները և սնման օրաբաժնի ավանդույթները, հիմնվելով սնման բուրգի և առողջության ափսեի, ՀՀ ԱՆ մեթոդական հանձնարարականի վրա մշակվել է բնակչության կողմից կենսապես կարևորագույն սննդամթերքների սնման երաշխավորվող ֆիզիոլոգիական նորմաներ, համեմատելով այն նվազագույն պարենային հավաքածուի և բնակչության վիստացի միջին տարեկան սպառման հետ: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ հանրապետության բնակչության սննդի փաստացի սպառման մեջ առկա է հիմնական սննդամթերքների թե քանակական և թե որակական համամասնության կոպիտ խախտումներ, ինչը նաև բնակչության թերսնուցման հետևանք է հանդիսացել:

Այլուտակ 5.

Թեղքի մաի ինքնաբավությամբ աստիճանը, բոջրմանը գլխավորող գյուղատնտեսի և բոջրման գյուղատնտեսի լայնը ԲՀ-ում 2001-2012 թթ.*

Տարեթվեր	Թեղքման ինքնաբավության աստիճանը, %	Թեղքման գլխավորող գյուղատնտեսի		Աման հավերի գլխավորող գյուղատնտեսի (հազ. գլուխ/0,101 դուրյանք)		Քաղաքային տվյալներ				Կորուստների չափը, հազ տոննա (ըստ պարենային հաշվեկշիռի)
		Ըստ մարզային ամփոփ տվյալների	Ըստ ԲՀ ԿԿՕ տվյալների	Ըստ մարզային ամփոփ տվյալների	Ըստ ԳԿՕ տվյալների	Աման հավերի տեսակարար կշիռը բոջրման միջին տարեկան գլխարանակում %	Աման հավերի միջին տարեկան գլխարանակ (հազ. գլուխ)	Մոջրման միջին տարեկան գլխարանակ (հազ. գլուխ)	Մոջրման միջին տարեկան գլխարանակում %	
2001	20,8	3975,2	4218,2	2961,1	3547,8	2856,2	80,5	2856,2	19,5	0,1
2002	25,6	3120,3	4194,6	2751,3	3872,7	2434,5	62,9	2434,5	37,1	0,1
2003	27,9	4625	3604,6	2117,6	4824,4	2251,6	46,7	2251,6	53,3	0,1
2004	24,3	5023,8	3740	2385,5	4942,8	2396,1	48,5	2396,1	51,5	0,1
2005	18,7	4861,7	3800,3	2406,7	4907,9	2576,4	52,5	2576,4	47,5	0,2
2006	32,3	4954,1	4163,7	2746	4526,1	2638,9	56,3	2638,9	41,7	0,1
2007	16,9	4098,1	3971,8	2531,8	4056,2	2603,1	64,2	2603,1	35,8	0,3
2008	14	4016,2	3649,1	2674,4	4103,2	2551,8	62,2	2551,8	37,8	0,1
2009	14,3	4188,2	3929,4	2429,2	4161,4	2539,5	61	2539,5	39	0,1
2010	12,4	4134,6	3758,1	2649,7	3796,6	2477,6	65,2	2477,6	34,8	0,1
2011	12,2	3462,5	3372,6	2305,4	3743	2407,3	64,3	2407,3	35,7	0,1
2012	19,1	4023,5	3420,5	2509,2	4037	2599,0	64,4	2599,0	35,6	0,2
2013		4050,0		2689,0						

*Այլուտակը կազմված է հաշվարկված է հեղինակի կողմից, պաշտոնական վիճակագրության տվյալները վերցված են: "Հայաստանի վիճակագրական տարեգիրք" 2002 թ., էջ 319, 2007 թ., էջ 287, 2008 թ., էջ 288, 2012 թ., էջ 304, 2013 թ., էջ 310 "Պարենային ապահովություն և աղքատություն" վիճակագրական տեղեկագիր 2001 թ. հունվար-դեկտեմբեր (էջ 70-71), 2008 թ. հունվար-հունիս (էջ 61-64), 2009 թ. հունվար-սեպտեմբեր (էջ 73), 2012 թ., հունվար-հունիս (էջ 62-64), 2012 թ. հունվար-սեպտեմբեր (էջ 58), 2013 թ., հունվար-դեկտեմբեր, (էջ 58, 71-72) մարզային ամփոփ տվյալները վերցված են ձև №7 "ԲՀ-ում անասնազխտաբանակի հաշվառման համընդամարները (գյուղացիական տնտեսություններ, արևոտային կազմակերպություններ, քնակաբույսեր օժանդակ տնտեսություններ)" տարեկան հաշվետվությունից: Թեղքման (մոմենտային) ժամանակային շարքը դարձնելու միջոցառումները միջին քվարտալների կիրառմամբ:

Շանթություն. ԲՀ ԿԿՕ-ն աման հավերի գլխարանակը իր հրապարակումներում արտացոլել է սկսած 2009 թվականից.

Բնակչության միջին տարեկան փաստացի սպառումը (1 շնչի հաշվով) համեմատելով նվազագույն պարենային հավաքածուի մեջ ընդգրկված պարենամթերքների քանակի և մեր կողմից մշակված սնման երաշխավորվող ֆիզիոլոգիական նորմաների հետ ստացվում է հետևյալ պատկերը. բնակչության սպառման մակարդակի ընդհանուր խիստ անբավարար ֆոնի վրա միայն հացամթերքի սպառման ծավալներն են գերազանցում սնման երաշխավորվող նորմաներին 32.9%-ով և նվազագույն պարենային հավաքածուում ընդգրկված ծավալներին 12.7%-ով, իսկ պանրի փաստացի սպառման ծավալների (երաշխավորվող նորմաներից պակաս է միայն 2%-ով, իսկ պարենային զամբյուղին գերազանցում է 7.7%-ով) մոտ լինելը դրանք բացատրվում է մեր բնակչության սպառման ազգային առանձնահատկություններով և ավանդույթներով: Միևնույն ժամանակ խիստ մտահոգիչ է սպառման անբավարար մակարդակը այնպիսի կարևորագույն պարենամթերքների գծով, ինչպիսիք են սնամթեքը, կաթնամթեքը, կենդանական և բուսական յուղը, ձկնամթեքը, բանջարեղենը (նաև կարտոֆիլը) և միրգը, շաքարն ու ծուխ:

Ատենախոսությունում կատարվել է 33-ում պարենային զամբյուղի ամսական արժեքի ներտարեկան դինամիկայի ուսումնասիրություն Ֆուրյեի շարքով, այսինքն հարմոնիկ վերլուծություն և դրա հիման վրա կանխատեսվել են 2013 թ.-ի չորս եռամսյակների համար պարենային զամբյուղի արժեքները երկու մեթոդաբանությունների գծով՝ ըստ 33 ԱՆ և 3Բ, հաշվարկված 33 ԱՎԾ-ի տվյալների հիման վրա:

Ատենախոսությունը "Եզրակացություններ և առաջարկություններ" բաժնում

ձևակերպվել են հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները, որոնցից մասնավորապես առանձնացվել են.

1. Բնակչության պարենային ապահովությունը յուրաքանչյուր պետության առաջնահերթ խնդիրներից ու ռազմավարական նպատակներից է և այն հիմնական նախապայման է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Հանրապետությունում աղքատության վերացումն առաջին հերթին իրենից ներկայացնում է պարենային աղքատության՝ ծայրահեղ աղքատության վերացումը: Ուստի երկրի պարենային ապահովության մակարդակի բարձրացումը հանդիսանում է հանրապետության բնակչության աղքատության կրճատման գլխավոր ուղղություններից մեկը:
2. Բարեփոխումների տարիներին մեր հանրապետությունում պարենային իրավիճակը կտրուկ կերպով սրվեց, իսկ որոշ պարենամթերքների գծով մեր երկիրը նույնիսկ դուրս է եկել պարենային անվտանգությունը որոշող Եուրասիայի սահմաններից, պարենի շարունակաբար աճող ներմուծումը չի փոխհատուցում դրա արտադրության կրճատման ծավալները: Ի տարբերություն տնտեսապես զարգացած երկրների 33-ում դեռևս չի ձևավորվել պետական պարենային քաղաքականություն, պետությունը չի կառավարում պարենամթերքի արտադրության, բաշխման և օգտագործման (սպառման) գործընթացները, գործնականում չի աջակցում գյուղատնտեսական արտադրությանը, չի կարգավորում պարենամթերքի ներկրումը և արտահանումը երկրից: Այսօր արդեն մի շարք պարենամթերքների գծով (ցորեն, հացահատիկաբլրնեղենային մշակաբույսեր, բուսական յուղ, շաքար, հավի միս) Հայաստանը չի կարող գոյատևել առանց ներմուծման, այս գործընթացին զուգահեռ գնալով կրճատվում են գյուղատնտեսական շատ կարևոր մշակաբույսերի ցանքատարածությունները:
3. Պարենային հաշվեկշիռներում ներկայացվող ինքնաբավության աստիճանի ցուցանիշը կարելի է ասել առանցքային դեր ունի պարենամթերքով բնակչության պահանջարկի բավարարման հարցում, իսկ վերջինս բխում է

ցանկացած պետության տնտեսական շահերից և ընկած է պարենային քաղաքականության հիմքում: Պարենամթերքով բնակչության պահանջարկի բավարարումը (առաջին հերթին, տեղական արտադրության հաշվին) միաժամանակ, հույժ կարևոր է նաև պարենային անկախության ապահովման տեսանկյունից, ինչն էլ իր հերթին իրենից ներկայացնում է երկրի պարենային անվտանգության ապահովման կարևորագույն նախապայմանը:

4. ՀՀ ժողովրդագրական ներկա իրավիճակի և պարենամթերքի նկատմամբ պահանջարկի տնտեսավիճակագրական գնահատման արդյունքում բազմակի գծային ռեգրեսիոն մոդելների կիրառմամբ (ուսումնասիրվել են ինքնաբավության ցածր աստիճան ունեցող երեք ապրանքատեսակների՝ ցորեն, թռչնամիս և բուսայուղ) ստացվել է, որ ՀՀ բնակչության աճի տեմպի 1%-ով ավելացումը մեկ շնչի հաշվով ցորենի սպառման ծավալները կավելացնի 34.44 կգ-ով, իսկ մեկ շնչին բաժին ընկնող գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալների հազար դրամով ավելացումը արդյունքային ցուցանիշը կավելացնի 0.273 կգ-ով՝ զործոնների զարգացման միտումների անփոփոխ մնալու դեպքում: Իսկ ՀՀ բնակչության թվաքանակի աճի տեմպի 1%-ով ավելացումը մեկ շնչի հաշվով հավի մսի սպառման ծավալները կավելացնի 9.009 կգ-ով և մեկ շնչին բաժին ընկնող գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալների հազար դրամով ավելացումը արդյունքային ցուցանիշը կավելացնի 0.031 կգ-ով կամ մեկ շնչին բաժին ընկնող գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալների յուրաքանչյուր 100.0 հազար դրամի ավելացումը զուգակցվել է մեկ շնչի հաշվով հավի մսի սպառման ծավալների 3.1 կգ-ով ավելացմամբ: Եվ վերջապես, ՀՀ բնակչության աճի տեմպի 1%-ով ավելացումը մեկ շնչի հաշվով բուսական յուղի սպառման ծավալները տարեկան կավելացնի 2.157 կգ-ով, իսկ մեկ շնչին բաժին ընկնող գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալների հազար դրամով ավելացումը արդյունքային ցուցանիշը կավելացնի 0.016 կգ-ով կամ մեկ շնչին բաժին ընկնող գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալների յուրաքանչյուր 100.0 հազար դրամի ավելացումը զուգակցվել է մեկ շնչի հաշվով բուսական յուղի սպառման ծավալների 1.6 կգ-ով ավելացմամբ:
5. Մեր հանրապետությունում վերջին տասներկու տարիների ընթացքում ազգային պարենային հաշվեկշռում ընդգրկված 14 հիմնական պարենամթերքների գծով ունեցել ենք արտադրության ծավալների աճ, ընդ որում աճման բարձր տեմպեր են գրանցվել հատկապես բանջարեղենի (231,2%), մրգի (324%), բուսական յուղի (900%), խաղողի (207,2%), հավի մսի (230,6%), կարտոֆիլի (177,9%) և հատիկալընդեղենային մշակաբույսերի (154,5%) գծով: Այդ ամենին զուգահեռ, նշված ժամանակաընթացքում որոշ ապրանքատեսակների ներմուծման գծով նա գրանցվել են աճման աննախընթաց տեմպեր, այսպես, ցորենի ներկրումը աճել է 52.7 %-ով, կարտոֆիլինը 3,9 անգամ, բանջարեղենինը շուրջ 19 անգամ, մրգինը ավելի քան 4,7 անգամ, բուսական յուղինը 105,3%-ով, կաթինը շուրջ 18 անգամ, տավարի մսինը 37,8%-ով, խոզի մսինը ավելի քան 4 անգամ, հավի մսինը շուրջ 2,5 անգամ, խաղողինը՝ 2,6%-ով: Բնակչության սպառման ցուցանիշները նշված ժամանակահատվածում ունեցել են հետևյալ պատկերը. վերջին տարիներին (սկսած 2007 թվականից) անճախընթաց կերպով կրճատվել է խաղողի սպառման ցուցանիշը, իսկ 2012 թ-ին 2001 թ-ի համեմատությամբ այն իջել է 85,8%-ով (118,9 հազ. տոննայից իջնելով մինչև 16,9 հազ.տոննայի), կրճատվել են նաև ցորենի (6%-ով) և կարտոֆիլի (13,9%-ով) սպառման ծավալները, իսկ մնացած պարենամթերքների գծով գրանցվել է աճ, բանջարեղենինը՝ ավելի քան 2,3 անգամ, մրգինը 3,1 անգամ, հատիկալընդեղենային մշակաբույսերինը 29,4 %-ով, բուսական յուղինը 2.2

անգամ, շաբարինը 13,4%-ով, ծվինը 50,9%-ով, կաթինը 71,9%-ով, տավարի մսինը 55,4%-ով, խոզի մսինը 103,3%-ով, ոչխարի և ածի մսինը 25,4%-ով, հապի մսինը շուրջ 2.5 անգամ: Արտահանման գծով պատկերը հետևյալն է. շուրջ 66 անգամ աճել է բանջարեղենի արտահանումը, ավելի քան 30 անգամ կաթինը, 11 անգամ խաղողինը, 1,9 անգամ շաբարինը և 4,4 անգամ մրգերինը: Այդ ամենը ուղղակիորեն անդրադառնում է պարենամթերքով ինքնաբավության ցածր աստիճանի վրա:

6. ՀՀ բնակչության պարենային ապահովության մակարդակը բնութագրող ցուցանիշների պարենամթերքի սպառման բավականաչափության և պարենի մատչելիության գործակիցների հաշվարկման արդյունքում ստացվել է, որ երկու մեթոդաբանությունների գծով էլ տեղի է ունեցել պարենամթերքի սպառման բավականաչափության գործակիցների անկում, ինչը իր բացասական ազդեցությունն է թողել բնակչության առողջության, հետևաբար նաև նրա կենսամակարդակի վրա: Նույն ժամանակահատվածում պարենի մատչելիության գործակիցը ևս անկում է ապրել. ըստ ՀՀ ԱՆ մեթոդաբանության այն 0,845-ից իջել է մինչև 0,763-ի իսկ ըստ ՀԲ մեթոդաբանության՝ 0,690-ից 0,595-ի: Դա ևս վկայում է բնակչության դրամական եկամտուների մեջ պարենային ապրանքների վրա կատարված ծախսերի տեսակարար կշռի բարձրացման, վերջիններիս ավելի քիչ մատչելի դառնալու և կենսամակարդակի անկման մասին: Միևնույն ժամանակ տվյալները փաստում են, որ հանրապետության բնակչության 1 շնչի հաշվով օրական փաստացի սպառված սննդամթերքի էներգետիկան (միջինը, կկալ) բոլոր տարիներին ցածր է եղել ըստ բժշկական նորմերի սահմանված սնման ռացիոնի (օրապահանջ) էներգետիկայից՝ երկու մեթոդաբանությունների դեպքում էլ:
7. ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռների վերջին տասներկու տարիների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ մեր երկրի պարենային անվաստության ապահովման համատեքստում, առաջիկա տարիներին, պահանջվելու է հացահատիկի, բուսական յուղի, շաքարի, խոզի և թռչնի մսի ինքնաբավության մակարդակի բարձրացում: Այսպես, վերլուծությունները ցույց են տալիս, որ վերջին տասներկու տարիների ընթացքում նկատելիորեն իջել են պարենի այնպիսի կարևորագույն տեսակների գծով ինքնաբավության աստիճանը, ինչպիսիք են. ցորենը (9,5 %-ով), կարտոֆիլը (0,4 %-ով), բանջարեղենը (0,5 %-ով), մրգերը (3,9 %-ով), ձուն (2,4 %-ով), կաթը (16,9 %-ով), խոզի միսը (53,5 %-ով) և հապի միսը (1,7 %-ով): Նույն ժամանակաընթացքում տավարի մսի (աճ 3,2 %-ով), հատիկաընդունային մշակաբույսերի (աճ 11,4% -ով), բուսական յուղի (աճ 6,9% -ով), շաքարի (2001 թ. 0,0-ից 2012 թ. հասել է մինչև 93,1%-ի), ոչխարի և ածի մսի (աճ 0,4 %-ով) և խաղողի (աճ 3,3% -ով) գծով նկատվել է ինքնաբավության աստիճանի բարձրացում: Ցորենի ինքնաբավության աստիճանի վրա ազդող գործոնների վիճակագրական վերլուծության արդյունքում պարզել ենք, որ ցորենի բերքատվության մակարդակի 1 ցենտներով ավելացումը ինքնաբավության աստիճանը բարձրացնում է 0,823%-ով, իսկ ցորենի կորուստների 1000 տոննայով կրճատումը ինքնաբավության աստիճանը կբարձրացնի միջին հաշվով 2,857%-ով:
8. Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նույն ժամանակաընթացքում հանրապետությունում նկատվել է թռչնամսի արտադրության ծավալների աճ 130,6%-ով: Իսկ ծվի արտադրության ծավալների աճը (թե՛ ամբողջությամբ վերցրած և թե՛ բնակչության մեկ շնչի հաշվով) խոսում է այն մասին, որ հայաստանում արտադրանքն իր որակով չի գիջում ներսնծված արտադրանքին և օրեցօր ավելի է ամրապնդում իր դիրքերը տեղական

շուկայում: Սակայն եթե ծվի գծով, ըստ ազգային պարենային հաշվեկշիռի տվյալների, հանրապետությունում ապահովվում է ինքնաբավության բարձր մակարդակ, ապա թոչնի մսի գծով պատկերը բոլորովին այլ է. 2001-2012 թթ. թոչնի մսի գծով ունեցել ենք ինքնաբավության ցածր մակարդակ (2001 թ.-ին 20,8%, 2012 թ.-ին՝ 19,1%), որն էլ գնալով շարունակաբար նվազել է կազմելով 1,6%: Հանրապետությունում թոչնի մսի ինքնաբավության աստիճանի վրա ազդող գործոնների ազդեցության չափի բացահայտման և դրանց վիճակագրական գնահատման արդյունքում՝ բազմագործոնային էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ բացահայտվել է, որ թոչնի մսի կորուստների մեկ տոննայով ավելացումը, մյուս հավասար պայմաններում, թոչնի մսի ինքնաբավության աստիճանը կրճատում է 0.018086%-ով, իսկ ոչ ածան հավերի գլխաքանակի տեսակարար կշիռի մեկ տոկոսով ավելացումը այդ ցուցանիշը բարձրացնում է 0.277%-ով: Սնացողների ավտոկոռնյացիայի գործակցով ճշգրտումից հետո ստացված արդյունքները հետևյալն են. թոչնի մսի կորուստների մեկ տոննայով կրճատումը, մյուս հավասար պայմաններում, թոչնի մսի ինքնաբավության աստիճանը կբարձրացնի 0.029196%-ով, իսկ ոչ ածան հավերի գլխաքանակի տեսակարար կշիռի մեկ տոկոսով ավելացումը այդ ցուցանիշը բարձրացնում է 0.465%-ով:

9. Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերջին քսան տարիներին հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական իրողության հետևանքով կտրուկ վատացել է բնակչության կենսամակարդակը և նրա գերակշիռ մեծամասնությունը հայտնվել է քրոնիկական թերսնման վիճակում: Ստեղծված պայմանները թելադրում են ռացիոնալ սննդի հիգիենիկ պահանջների նկատմամբ ցուցաբերել նորովի, արդի իրավիճակին համահունչ մոտեցում և բնակչության տարբեր խմբերի փաստացի սննդի ուսումնասիրության արդյունքների հիման վրա մշակել սոցիալական առկա պայմաններին հարիր հիմնական սննդամթերքների նվազազույն, սակայն օրգանիզմի համար անվտանգ քանակություն ապահովող սննդային օրաբաժիններ: Այն իր հերթին կարող է լուծել պետության առջև ծառայած, հրատապ խնդիր հանդիսացող, բնակչության մեկ շնչի համար սննդամթերքի գիտականորեն հիմնավորված նվազագույն սպառողական զանբյուրը:
10. Հաշվի առնելով հանրապետության ներկա սոցիալ-տնտեսական վիճակը, տարածաշրջանի առանձնահատկությունները և սնման օրաբաժնի ավանդույթները, հիմնվելով սնման բուրգի և առողջության ափսեի, ՀՀ ԱՆ մեթոդական հանձնարարականի վրա ատենախոսությունում մշակվել է բնակչության կողմից կենսապես կարևորագույն սննդամթերքների սնման երաշխավորվող ֆիզիոլոգիական նորմաներ, համեմատելով այն նվազագույն պարենային հավաքածուի և բնակչության փաստացի միջին տարեկան սպառման հետ: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ հանրապետության բնակչության սննդի փաստացի սպառման մեջ առկա են հիմնական սննդամթերքների թե՛ քանակական և թե՛ որակական համամասնության կոպիտ խախտումներ, ինչը նաև բնակչության թերսնուցման հետևանք է հանդիսացել: Այսպես, բնակչության միջին տարեկան փաստացի սպառումը (1 շնչի հաշվով) համեմատելով նվազագույն պարենային հավաքածուի մեջ ընդգրկված պարենամթերքների քանակի և մեր կողմից մշակված սնման երաշխավորվող ֆիզիոլոգիական նորմաների հետ ստացվում է հետևյալ պատկերը. բնակչության սպառման մակարդակի ընդհանուր խիստ անբավարար ֆոնի վրա միայն հացամթերքի սպառման ծավալներն են գերազանցում սնման երաշխավորվող նորմաներին 32,9%-ով և նվազագույն պարենային հավաքածուում ընդգրկված ծավալներին 12,7%-ով, իսկ պանրի փաստացի

սպառման ծավալների (երաշխավորվող նորմաներից պակաս է միայն 2%-ով, իսկ պարենային զամբյուղին գերազանցում է 7,7%-ով) մոտ լինելը դրանց բացատրվում է մեր բնակչության սպառման ազգային առանձնահատկություններով և ավանդույթներով: Միևնույն ժամանակ խիստ մտահոգիչ է սպառման անբավարար մակարդակը այնպիսի կարևորագույն պարենամթերքների գծով, ինչպիսիք են մսամթերքը, կաթնամթերքը, կենդանական և բուսական յուղը, ձկնամթերքը, բանջարեղենը (նաև կարտոֆիլը) և միրգը, շաքարն ու ծուն: Այսպիսով պարենամթերքների սպառումը հանրապետությունում անհավասարակշռված է, դրա քրոնիկական բնույթը խիստ բացասաբար է անդրադառնում մարդկանց առողջության և կենսագործունեության վրա: Հարկ է նշել, որ թերսնուցման դրսևորումներից են նաև սննդում յոդի պակասով պայմանավորված առողջական վիճակի խանգարումների և հիվանդությունների առկայությունը: Իսկ Հայաստանը, որպես լեռնային երկիր, յոդի անբավարարության առումով դասվում է էնդեմիկ տարածաշրջանների շարքին, դա է պատճառը, որ այսօր յոդի պակասի հետևանքների դեմ պայքարն և կանխարգելիչ միջոցառումների իրականացումը դարձել է հանրային առողջապահության գերակա խնդիրներից մեկը: Մեր կողմից առաջարկած երաշխավորվող նորմաներով սնվելիս տարեկան նորմայի արժեքը 1 շնչի հաշվով կկազմի 550587,8 դրամ ներկայիս պարենային զամբյուղի 393176,7 դրամի և փաստացի սպառման 248512,2 դրամի դիմաց, կամ ամսական հարկ կլինի միայն սննդի վրա ծախսել 45882,3 դրամ պարենային զամբյուղի 32764,8 դրամի և փաստացի սպառման 20709,4 դրամի դիմաց: Դա հնարավորություն կտա ապահովել բնակչության լիարժեք, հաշվեկշռված սնուցումը սպառվող սննդամթերքի անվտանգության ապահովման պայմաններում և աստիճանաբար հաղթահարել քաղցը, թերսնուցման տարաբնույթ դրսևորումները ու դրանց հետևանքները:

11. Հարկ է նշել, որ մինչ այժմ մշակված ծրագրերում, հայեցակարգերում և մեթոդական հանձնարարականներում բոլորովին ուշադրություն չի դարձված որակյալ խմելու ջրի սպառման խնդրին: Իսկ քանի որ ջուրը իրենից ներկայացնում է սնման օրաբաժնի կարևորագույն տարրերից մեկը, մարդկային օրգանիզմի գործունեության համակարգի կարևորագույն գործոնը, սննդի պատրաստման անփոխարինելի բաղադրատարրը և վերջապես մարդու առողջության հիմնական պայմանը, հետևաբար, ջրի որակի իրական վիճակն և դրա սպառման անվտանգությունը պետք է դառնա հանրապետության բնակչության սնման մոնիթորինգի բաղկացուցիչներից և հայեցակարգում զբաղեցնի արժանի տեղ: Առենայնսությունում առաջարկվել է որակյալ խմելու ջրի ամսական արժեքը ներառել պարենային զամբյուղի մեջ:
12. ՀՀ տնային տնտեսությունների դրամական եկամուտների և ծախսերի կազմի, կառուցվածքի և դինամիկայի ուսումնասիրությունը վերջին 12 տարիներին ցույց է տալիս, որ ՀՀ տնային տնտեսությունների դրամական եկամուտների աճման տեմպերը գերազանցում են ծախսերի աճման տեմպերին (2001 թ. համեմատությամբ դրանց գերազանցման տեմպը կազմել է 1.118, իսկ 2005 թ. համեմատությամբ 1.391): Նշված ժամանակահատվածում ՀՀ տնային տնտեսությունների ամսական դրամական եկամուտները աճել են 3,05 անգամ, իսկ ծախսերը շուրջ 2.73 անգամ: 2005-2012 թթ. ընկած ժամանակահատվածում դրանք համապատասխանաբար կազմել են 2.145 և 1.542 անգամ: Հարկ է նշել, որ դրամական եկամուտների կազմում գերակշիռ տեղ են զբաղեցնում աշխատանքի վարձատրությունից ստացված եկամուտները, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր դրամական եկամուտների մեջ գնալով աճում է և վերջին տարիներին աստանձվում է շուրջ 60 տոկոսի

սահմաններում, ուսումնասիրվող ժամանակահատվածում եկամուտների այդ արբյուրի տեսակարար կշիռը աճել է 17.5 %-ով: ՏՏային տնտեսությունների ծախսերի կառուցվածքում գերակշիռ տեղ են զբաղեցնում պարենային ապրանքների (ներառյալ ծխախոտը) վրա կատարված ծախսերը, չնայած վերջին տարիներից դրանց տեսակարար կշռի շարունակաբար նվազման, այնուհանդերձ ծախսերի այդ ուղղությունը գերիշխող է համարվում ծախսերի մնացած ուղղությունների նկատմամբ, նշված ժամանակաընթացքում ծախսերի այդ հողվածը նվազել է 13.8%-ով: Նույն ժամանակամիջոցում սպառողական ապրանքների և ծառայությունների առանձին տեսակների տարեկան միջին գները և սակագները և ունեցել են աճման միտում: Վերլուծությունները ցույց են տվել նաև, որ պարենային ապրանքների սպառողական գների ինդեքսն ավելի արագ է աճել, քան ողջ ապրանքների և ծառայությունների գների և սակագների ինդեքսը:

13. ՀՀ-ում պարենային զամբյուղի ամսական արժեքի ներտարեկան դինամիկայի ուսումնասիրության և Ֆուդլեյի շարքով կատարված կանխատեսումների արդյունքում հաշվարկվել են պարենային զամբյուղի արժեքները 2013 թ.-ի 1-4 եռամսյակների համար երկու մեթոդաբանությունների գծով առանձին-առանձին և ստացվել է, որ 2013 թ.-ի 4-րդ եռամսյակում ըստ ՀՀ ԱՆ մեթոդաբանության այն կկազմի 22830,79 դրամ, իսկ ըստ ՀԲ մեթոդաբանության՝ 18306,57 դրամ:
14. Գյուղատնտեսական արտադրության, պարենային անվտանգության և երկրի անկախության վերականգնումը այսօր պետք է հանդիսանա մեր երկրի պետական քաղաքականության գերակա խնդիրը: Այդպիսի քաղաքականության ձևավորման և իրականացման գործում բացառիկ կարևոր նշանակություն ունի բազմամյա արդյունավետ ագրարային քաղաքականության պատմություն ունեցող երկրների դրական փորձի ուսումնասիրությունը, որը մեր երկիրն հնարավորության կտա ոչ միայն ազատվել ներմուծումից, այլև հայտնվելու այն երկրների կազմում, որոնք հանդիսանում են պարենամթերքի կայուն արտահանողներ:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ 19 գիտական հոդվածներում.

1. Avetisyan S.S., Mamikonyan G., "Food safety and food security problems in Armenia (on the basis of data analysis of food balances)", "Bulletin of State Agrarian University of Armenia", International Scientific Journal, 3 (31) 2010, Yerevan, pp. 163-167
2. Վարդանյան Գ., Վարդանյան Հ., Մամիկոնյան Գ., "ԱՊՀ ագրոպարենային շուկայի ինտեգրացման աստիճանի էմպիրիկ վերլուծություն", Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Ռուստվի պետական տնտեսագիտական համալսարանի "Կրթության, գիտության և արտադրության ինտեգրումը որպես տնտեսական աճի ապահովման ռազմավարական ուղղություն" միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 21-22 հոկտեմբերի, 2010, էջ 194-200
3. Վարդանյան Գ., Վարդանյան Հ., Մամիկոնյան Գ., "Ինտեգրման գործընթացների զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները տնտեսության մեջ և դրանց արդյունավետության գնահատման մեթոդները", "ՀՀ և ՌԴ տնտեսությունների նորաստեղծական զարգացման հիմնախնդիրները" միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան-Դոնի Ռուստով, 2011, 28-30 հունիսի, ՀԳՏՀ, Երևան, "Տնտեսագետ", 2011
4. Վարդանյան Գ., Վարդանյան Հ., Մամիկոնյան Գ., "Ինքնապահովումը որպես տարածաշրջանի պարենային ապահովության չափանիշ (ՀՀ տվյալներով) ",

Материалы международной научной конференции по проблемам механизации сельского хозяйства и сельскохозяйственного машиностроения, НАУА, Ереван, 2013, сс. 174-180

5. Վարդանյան Գ., Վարդանյան Յ., Սամիկոնյան Գ., "Պարենային ապահովության վիճակագրական ցուցանիշները որպես բնակչության առողջության պահպանման բնութագրիչներ", "Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները", ՀՊՏՀ 22-րդ գիտաժողովի նյութեր, 2012, Նոյեմբեր 16-19, Երևան 2013, էջ 467-473
6. Վարդանյան Գ., Վարդանյան Յ., Սամիկոնյան Գ., "ՀՀ ժողովրդագրական ներկա իրավիճակի և պարենամթերքի նկատմամբ պահանջարկի գնահատումը", Հայաստանի տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները (հանրապետական գիտաժողովի նյութեր նվիրված Մ.Աղոնցի 100 ամյակին), 17-18 մայիսի, 2010 թ., Երևան, Տնտեսագետ, 2010, էջ 250-256
7. Վարդանյան Գ., Սամիկոնյան Գ., "Բնակչության առողջական վիճակի ցուցանիշները և աղքատությունը Հայաստանում", "Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա", մայիս 2007, N 5 (82), էջ 53 – 59
8. Վարդանյան Գ., Սամիկոնյան Գ., "Պարենային ապահովությունը որպես աղքատության հաղթահարման ռազմավարություն. հարցի վիճակագրական ասպեկտ (ՀՀ տվյալներով) ", Материалы международной научной конференции "Современные проблемы экологического и органического сельского хозяйства", НАУА, Ереван, 2012, сс. 142-149
9. Վարդանյան Գ., Սամիկոնյան Գ., "Սպառողական զամբյուղների հաշվարկման մեթոդաբանությունը (ՀՀ տվյալներով) ", "Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա", հունվար 2007, N 1 (78), էջ 231 – 235
10. Վարդանյան Գ., Սամիկոնյան Գ., "Կրթությունը և աղքատությունը Հայաստանում, հարցի վիճակագրական ասպեկտ", "Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա", հուլիս - օգոստոս 2007, N 7- 8, էջ 129 – 132
11. Սամիկոնյան Գ., "Պարենային հաշվեկշիռների կազմման անհրաժեշտությունը երկրի պարենային ապահովության ձեռք բերման գործում", "Ազրոգիտություն" գիտական ամսագիր, № 1-2 հունվար-փետրվար, 2013, էջ 17-21
12. Սամիկոնյան Գ., "ՀՀ բնակչության կենսապես կարևորագույն սննդամթերքի ապահովվածության մակարդակի վիճակագրական վերլուծությունը", "Ազրոգիտություն" գիտական ամսագիր, № 7-8 հուլիս-օգոստոս, 2013, էջ 343-348
13. Սամիկոնյան Գ., "ՀՀ պարենային անվտանգության քաղաքականության հիմնադրույթները", ՀՊԱՀ-ի 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2011, էջ 150-154
14. Սամիկոնյան Գ., "ՀՀ-ում պարենային զամբյուղի ամսական արժեքի ներտարեկան դինամիկայի ուսումնասիրությունը" Ֆուլբիտի շարքով, և կանխատեսումներ", "Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա ամսագիր", 2013թ. #6(156) Հունիս, էջ 70-73
15. Vardanyan G., Mamikonyan G., "About the self-sufficiency level of poultry", "Annals of agrarian science", "Известия аграрной науки", Vol. (том) 11, # 2, p.p. (стр.) 60-66, Гruzия, Тбилиси, 2013, www.agricience.ge
16. Vardanyan G., Vardanyan H., Mamikonyan G., "Comparative interregional analysis of the indices characterizing the economic development level of the regions", "Bulletin of State Agrarian University of Armenia", International Scientific Journal, Yerevan 2 (26) 2009 pp. 93 – 96
17. Vardanyan G., Vardanyan H., Mamikonyan G., "The analysis of the indices characterizing Human Poverty in the Republic of Armenia", "Bulletin of State

Agrarian University of Armenia", International Scientific Journal, 3 (19) 2007
International Scientific Conference, pp. 143 – 146

18. Vardanyan G., Vardanyan H., Mamikonyan G., "The peculiarities of the manifestation of the phenomenon of social vulnerability in Armenia and the current problems", "Bulletin of State Agrarian University of Armenia", "Bulletin of State Agrarian University of Armenia", International Scientific Conference, October, 1 - 3, Yerevan 2008, 2, 2008, pp. 130- 134
19. Vardanyan G., Vardanyan H., Mamikonyan G., "The system indices of regional statistics (the theoretical aspect of the issue)", "Bulletin of State Agrarian University of Armenia", International Scientific Conference, October 28 - 31 Yerevan, 3 (27) 2009, pp. 163- 168

“Методология и анализ экономико-статистической оценки продовольственного обеспечения населения (по данным РА)”

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 - “Финансы, бухгалтерский учет”

Защита диссертации состоится 12-го июня 2014 г., в 14:00 часов на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, 1 Ереван, ул. М. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Производство продуктов питания является главным и абсолютно неустрашимым условием жизни каждого человека и человечества в целом. Дефицит продовольствия обесценивает и делает бессмысленными все другие экономические и социальные категории, определяющие уровень развития общества и качество жизни людей. Вместе с тем в XXI век человечество вступило с перспективой серьезного за всю историю обострения продовольственной проблемы. Решение проблемы продовольственного обеспечения является важным условием обеспечения социальной стабильности в стране (регионе). В этом контексте исключительно важна роль статистики, так как исследование проблем связанных с состоянием и стратегией продовольственного обеспечения населения, приобретает особенную актуальность в современных условиях развития регионов Армении. Основной целью диссертационного исследования является разработка методологии экономико-статистической оценки продовольственной обеспеченности населения на основе реализации положений продовольственной безопасности и продовольственного обеспечения, включая систему статистических показателей, порядок их расчета и анализ по данным РА.

В соответствии с целью исследования в диссертации были поставлены и решены следующие задачи:

- Дать качественную и количественную оценку экономического роста в аграрной сфере РА и раскрыть сельскохозяйственные аспекты решения проблемы продовольственного обеспечения населения,
- На основе положений продовольственной безопасности и продовольственного обеспечения населения РА дать оценку нынешней демографической ситуации и спроса на продовольствие в республике,
- Обосновать необходимость составления продовольственных балансов в деле приобретения продовольственной обеспеченности страны, в частности выявляя продукты питания, имеющие низкую степень самообеспеченности, одновременно дать статистическую оценку факторов, влияющих на степень их самообеспеченности,
- Разработать методологию экономико-статистического оценивания продовольственного обеспечения населения, предлагая характеризующие его систему показателей и анализировать их,
- Принимая самообеспечение как основной критерий продовольственного обеспечения региона, дать разные подходы оценки его уровня, изучать динамику уровня самообеспечения 14-ти видов товаров, включенных в продовольственные балансы за 2001-2012 гг. и провести статистическую оценку влияния долей воздействующих факторов на степень самообеспеченности пшеницы и курятины,

- Провести статистический анализ уровня обеспеченности населения жизненно важными продуктами питания, разрабатывая новые рекомендуемые физиологические нормы питания для населения Армении, базируясь на пирамиду и тарелку питания, сравнивая предложенные нормы с минимальным продуктовым набором и уровнем фактического потребления на душу населения,
- Изучить внутригодовую динамику месячной стоимости продовольственной корзины РА рядом Фурье и представить соответствующие прогнозы на 1-4 кварталы 2013 года.

Предметом исследования является разработка методологии экономико-статистической оценки продовольственного обеспечения населения республики и анализ показателей в контексте решения проблемы обеспечения населения физической и экономической доступности жизненно важными видами продовольствия.

Основными объектами исследования являются данные национальных продовольственных балансов РА, а также другие факторы, обуславливающие продовольственную обеспеченность населения: степень самообеспеченности разными видами продуктов питания, предельные индикаторы жизненно важных продуктов питания населения РА.

Научная новизна исследования заключается в следующем:

- Обоснована необходимость составления продовольственных балансов в деле приобретения продовольственной обеспеченности страны, в частности выявлены продукты питания, имеющие низкую степень самообеспеченности, одновременно дана статистическая оценка факторов, влияющих на степень их самообеспеченности,
- Исследуя и обобщая международный опыт, впервые в статистической практике разработана методология экономико-статистического оценивания продовольственного обеспечения населения, формируя характеризующие его систему показателей, дана порядок их исчисления и методы анализа,
- Принимая самообеспечение как основной критерий продовольственного обеспечения региона, даны разные подходы оценки его уровня, выявлены тенденции изменения уровня самообеспечения 14-ти видов товаров, включенных в продовольственные балансы, дана статистическая оценка влияния долей воздействующих факторов на степень самообеспеченности пшеницы и курятины,
- В результате экономико-статистического анализа уровня обеспеченности населения жизненно важными продуктами питания и на основе пирамиды и тарелки питания разработаны и предложены новые рекомендуемые физиологические нормы питания для населения Армении, дана их сравнительная оценка с минимальным продуктовым набором и уровнем фактического потребления на душу населения,
- Выявлены тенденции развития внутригодовой динамики месячной стоимости продовольственной корзины РА рядом Фурье и представлены соответствующие прогнозы на 1-4 кварталы 2013 года.

Практическая значимость диссертационной работы заключается в том, что основные положения и результаты исследования могут быть рекомендованы правительству, органам исполнительной власти и Национальной Статистической Службы РА для использования при разработке программ социального развития с целью выбора более действенных мер, направленных на повышение уровня обеспеченности населения основными видами продуктов питания, а также при разработке учебных программ по дисциплине “Социально-экономическая статистика”.

**METHODOLOGY AND ANALYSIS OF ECONOMIC AND STATISTICAL
EVALUATION OF FOOD SECURITY OF THE POPULATION (ACCORDING TO RA
DATA)**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.03-“Finance, Accounting”.

The defence of the thesis will take place on June 12, 2014 at 14:00 o'clock at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics, to: 128 M. Nalbandyan str., Yerevan, RA, 0025.

ABSTRACT

Food production is a major and fatal condition in the life of every man and of humanity as a whole. Food shortages devalue and make meaningless all other economic and social categories that determine the level of development of society and quality of life. However, humanity has entered the XXI century with a serious prospect in the history of acute food problem. Solving the problem of food security is an important prerequisite for social stability in the country (region). In this context, the role of statistics is extremely important, because the study of problems related to the status and strategy of food security of the population, is of particular relevance in the current situation of the regions of Armenia.

The main purpose of the dissertation research is to develop a methodology for economic and statistical evaluation of food security of the population on the basis of the implementation of the food safety and food security, including the system of statistical indicators, the order of calculation and analysis according to the RA.

In accordance with the purpose of the study the following problems were formulated and solved in the thesis:

- To give a qualitative and quantitative assessment of economic growth in the agricultural sector of RA and reveal aspects of the problem solution of food security of the population,
- On the basis of the provisions of the food safety and food security of the population of Armenia to assess the current demographic situation and the demand for food in the country,
- Justification of the need to establish food balances in the acquisition of food security of the country (based on the analysis of data from the national food balances), in particular by identifying foods that have low self-sufficiency level (wheat, vegetable oil, chicken), giving a statistical evaluation of factors affecting the degree of their self-sufficiency,
- Develop a methodology for economic and statistical evaluation of food security of the population, offering characterizing the scorecard and analyze them
- Taking the self-sufficiency as the main criterion for food security in the region, assess different approaches of its level, study the dynamics of self-sufficiency level of 14 types of goods included in the food balances for 2001-2012 and result in a statistical evaluation of the effect of influencing factors on the proportion of degree of self-sufficiency of wheat and poultry meat,
- Perform statistical analysis of the level of availability of vital food, developing new physiological recommended nutritional standards for the Armenian population,

based on the food pyramid and plate comparing the proposed norms with a minimum of food basket and the level of actual consumption per capita,

• Investigate the dynamics of a monthly food basket of RA with Fourier series and submit by appropriate projections for 1-4 quarters of 2013,

The subject of this study is to develop a methodology of economic and statistical evaluation of food security of the republic and analysis of indicators in the context of solving the problem of providing public physical and economic access to vital types of food. Basic objects of the study are data from national food balance sheets of RA, as well as the other factors that contribute to food security of the population: the degree of self-sufficiency of different types of foods, limit indicators of vital food of RA population (physiological nutritional standards, minimum food set, the average annual per capita actual consumption).

Scientific novelty of the research is the following:

- Justified the necessity of making food balances in the acquisition of food security of the country (based on analysis of data from the national food balance sheets), in particular identified foods having low level of self-sufficiency (wheat, vegetable oil, poultry meat), giving statistical evaluation of factors affecting the degree of their self-sufficiency,
- Investigating and summarizing international experience, for the first time in statistical practice methodology was developed for economic and statistical evaluation of the food security of the population, forming characterizing the scorecard, given the procedure of calculation and analysis methods,
- Taking the self-sufficiency as the main criterion for food security in the region, given the different approaches to assess its level tendencies of changes in the level of self-sufficiency of 14 types of goods included in the food balances, given the statistical evaluation of the impact of share of influencing factors on the degree of self-sufficiency of wheat and chicken,
- As a result of economic and statistical analysis of the level of availability of essential food and on the basis of the food pyramid and food plate developed and proposed new recommended physiological nutritional standards for the Armenian population, given their comparative evaluation with a minimum level of food basket and actual consumption per capita,
- Tendencies of development of the dynamics of the monthly cost of the food basket of RA are revealed with Fourier series and represented by appropriate projections for 1-4 quarters of 2013.

The practical significance of the thesis lies in the fact that the basic position and results of research can be recommended to the Government, the executive authorities and the National Statistical Service of RA for use in the development of social development programs in order to select more effective measures aimed at improving the provision of basic types of products nutrition, and the development of curricula in the discipline "Socio-economic statistics".





Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարանում:
Տպաքանակ 50: